

## ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ԱՐԱՔԱԿԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԲՆԱԳԻՐԸ

Բանասիրության մեջ երկար ժամանակ հայտնի էր Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» միայն մեկ խմբագրությունը, որի հայերեն բնագիրը (այսուհետև՝ Ա. Հայ.) լույս տեսավ գեո 1709 թ. և մինչև 1909 թ.<sup>1</sup> Բազմաթիվ հրատարակություններ ունեցավ Ագաթանգեղոսի հունարեն թարգմանությունը<sup>2</sup> (այսուհետև՝ Ա. հուն.) նույնպես հայտնի է մի քանի հրատարակություններով Այժմ հայտնի է նաև արաբերեն թարգմանությունը (այսուհետև՝ Ա. ար.):

Ագաթանգեղոսի «Պատմությունից» համառոտ թարգմանություններ են կատարված մի քանի լեզուներով (հունարեն, արաբերեն, լատիներեն, հաբեշերեն, վրացերեն, սլավոներեն)<sup>3</sup>, ու թեև մինչև անցյալ դարի վերջը թվում էր, թե սա է Հայոց Դարձի միակ պատմությունը<sup>4</sup>, այսուհանդիմ, Գեորգ Ասորու նամակում Ագաթանգեղոսի պատմության մասին տրված հակիրճ նկարագրության համեմատությունը այս խմբագրության հետ ցույց էր տալիս, որ ասորի մատենագիրը այլ խմբագրությունից է քաղել իր տեղեկությունները, սակայն հայտնի չէր, թե ո՞րն է այն:

Հայագիտության մեջ մի մեծ նորություն էր 1902 թ. Ն. Մառի կողմից հայտնաբերված Ագաթանգեղոսի արաբական խմբագրությունը, որի համեմատությունը մեզ հայտնի բնագրի հետ բացահայտորեն ցույց տվեց, որ թեև նյութը հիմնականում նույնն է, այսուհանգերձ նորահայտ խմբագրությունն անկախ է և ինքնուրույն:

Ն. Մառի հայտնաբերած Սինայի (Եգիպտոս) Ս. Կատարինե վանքի ձեռագիրը (Sin. ar. 460 պարունակում է մի քանի երկեր, որոնց մեջ առաջինը այս արաբերեն Վարքն է (այսուհետև՝ Վ. ար.):<sup>5</sup> Ձեռագիրը սկզբից ու վերջից պակաս է, և մեր արաբական խմբագրությունը զբաղեցնում է 1ա—35բ էջերը: Դրված է մագաղաթի վրա ու թեև անթվական է, բայց ըստ գրչագրական հատկանիշների (քուֆի, մասամբ հակված նասխի գրության) X դարից ավելի ուշ չէ: Ձեռագիրը պարունակում է Ագաթանգեղոսի պատմության հետևյալ հատվածների նյութերը՝ Գրիգորի վկայաբանության մի մասը, Հոփսիմյանց վկայաբանությունը, Գրիգորի քարոզն ու տեսիլքը, Վարդապետությունից մի փոքրիկ մաս և Դարձի պատմությունը: Արաբական այս թարգմանության ժամանակը Ն. Մառը որոշում է IX դար:

Հրատարակելով այս արաբերեն բնագիրը ուսերեն թարգմանությամբ, Ն. Մառը նույն գրքում տվել է մի արժեքավոր ուսումնասիրություն, ուր Ագաթանգեղոսի պատմության հետ կապված բանասիրական հարցեր է լուծել: Սակայն ձեռագիրը սկզբից պակաս լինելով, բնականաբար, պիտի խանգարեր ամբողջական մի տեսություն զարգացնելու, քանի որ հայտնի չէր, թե ընդհանրապես

1 «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», աշխ. Գ. Տեր-Մկրտչյան և Ստ. Կանայանց, էջմիածին-Տփղիս, 1909:

2 Agathangelus und die Akten Gregors von Armenien, neu hrsg. P. de Lagarde: Göttingen, 1887.

3 Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, Ագաթանգեղոսի արաբական նոր խմբագրությունը, Երևան, 1968, էջ 5—19, 42—44:

4 Ագաթանգեղոսի պատմությունը հիմնականում ունի հինգ խոշոր հատվածներ՝ Խոսրովի ու Տրդատի պատմությունը, Գրիգորի վկայաբանությունը, Հոփսիմյանց վկայաբանությունը, Գրիգորի քարոզն ու տեսիլքը և Դարձ աշխարհիս Հայոց: Այս բոլորի մեջ Վարդապետությունը մի ինքնուրույն գիրք է, որն իր ծավալով զբաղեցնում է ամբողջի կեսը:

5 Н. Марр, Крещение армян, грузин, абхазов и аланов святым Григорием (арабская версия), СПб., 1905.

ի՞նչ նյութեր է ունեցել այս նոր խմբագրությունը, որն ըստ Ն. Մառի, անկասկած, հունարենից էր թարգմանված: Համենայն դեպս, հենվելով այս նոր խմբագրության վրա, Ն. Մառը կարողացավ հաստատ կերպով ցույց տալ, որ մեզ հայտնի Ագաթանգեղոսի պատմությունից բացի եղել է մեկ այլ խմբագրություն:

Ն. Մառի ենթադրությունը հունական խմբագրության գոյության մասին հաստատվեց, երբ 1946 թ. Ժ. Գարիտը հրատարակեց էսկուրիալի (Իսպանիա) մատենադարանում իր հայտնաբերած հունարեն խմբագրությունը (այսուհետև՝ Վ. հուն.): Դա գտնվում էր 1107 թ. կրող մագաղաթյա ձեռագրում: Նորահայտ ձեռագիրը պարունակում էր Գրիգորի վկայաբանությունից սկսած Ագաթանգեղոսի բոլոր մնացած հատվածները: Համեմատելով Վ. ար. այս հունականի հետ, Ժ. Գարիտը գտնում է, որ արաբական իր որոշ մասերով (մանավանդ Դարձի պատմությունը) ուղղակի այս հունական խմբագրությունից է թարգմանված: Իհարկե, սա արժեքավոր նվաճում էր, բայց Վ. ար. էությունը և ծագումը դարձյալ մնում էր անորոշ, քանի դեռ չկար նրա ամբողջական ձեռագիրը: Ժ. Գարիտը այս հունարեն բնագրի հրատարակության հետ տվեց Վ. ար. լատիներեն թարգմանությունը (պարբերությունների նոր թվահամարներով), համեմատելու նպատակով, և այս բոլորին առնթեր՝ մի արժեքավոր ուսումնասիրություն: Նա բազմաթիվ փաստերով ապացուցեց, որ իր հրատարակած Վ. հուն. մեզ չհասած մի հայերեն բնագրից է թարգմանված:

Այսպիսով, բանասիրության մեջ գոյացավ մի նախնական պատկեր Ագաթանգեղոսի այն անհայտ խմբագրության մասին (Վարք), որի հայերեն բնագիրը դեռ հայտնի չէ, բայց կային հունարեն և արաբերեն թարգմանությունները և լուրջ ուսումնասիրման նյութ էին դարձել:

Շուտով հայտնաբերվեցին նաև նոր ձեռագրեր, որոնք այս Վարք կոչված խմբագրությանն են առնչվում: 1961 թ. Հ. Ֆ. Հալկինը Օքսֆորդյի (Հարավսլավիա) ազգային թանգարանում հայտնաբերեց մի նոր հունարեն ձեռագիր<sup>7</sup>, որը խառնածին բնագիր է (այսուհետև՝ Վ. օքս.) և միջանկյալ օղակ՝ Ագաթանգեղոսի մեզ հայտնի խմբագրության և նրա մյուս խմբագրության (Վարքի) միջև: Այս բնագիրը հրատարակվեց Ժ. Գարիտի կողմից 1965 թ.: Վերջապես 1971 թ. Մ. Վան էսբրոեքի ջանքերով Փարիզում լույս տեսավ ևս մի նոր բնագիր՝ Երուսաղեմի Հակոբիկ ասորիների Ս. Մարկոս վանքի քարշունի (ասորատառ արաբերեն) մի ձեռագիր<sup>8</sup>, որը, ինչպես նրանում նշված է, ասորերենից է արաբերենի թարգմանվել (այսուհետև՝ Վ. քրշ.): Սա պարունակում է Ագաթանգեղոսի պատմության հիմնական նյութերը բոլորովին այլ խմբագրությամբ և նույնպես Վարք<sup>9</sup> կոչված խմբագրությանը (կամ խմբագրությունների խմբին) է առնչվում:

Այսպիսով, արդեն հայտնաբերված է չորս բնագիր (երկուսը հունարեն, երկուսը արաբերեն), որոնք մեկ ընդհանուր շրջանակի մեջ են մտնում, բայց ոչ մեկը մյուսի հետ ամբողջովին չի համընկնում, իսկ ամենից առաջ հայտնաբերվածը՝ Վ. ար. բնագիրը, մնում էր պակասավոր:

1972 թ. հուլիսին Բեյրութի ամերիկյան համալսարանի գրադարանում Սինայի վանքի ձեռագրերի մանրաթափվածների մեջ մեզ հաջողվեց գտնել Վ. ար. ամբողջական ձեռագիրը (Sin. ar. 455): Սա XII դարի թղթե ձեռագիր է, որը պարունակում է մի քանի երկեր: Ձեռագիրն ունի 400 թերթ, 20×13,5 սմ չափսերով: Նրա պարունակած նյութերը կարելի է երեք մասի բաժանել: Առաջին մասը Ճառեր կամ Քարոզներ են տարբեր հեղինակներից (օրինակ, Հովհան Դամասկեցի և մանավանդ Հովհան Ոսկեբերան, որից կա ութ ճառ): Ապա գալիս է երկու վարք, որոնցից առաջինը

<sup>6</sup> G. Garitte, Documents pour l'étude du livre d'Agathange, Vatican, 1946 (Studi e testi 127):

<sup>7</sup> G. Garitte, Une Vie grecque inédite de Saint Grégoire d'Arménie, Analecta Bollandiana, t. 83, fasc. 3—4, Bruxelles, 1965.

<sup>8</sup> M. Van Esbroeck, Un nouveau témoin du livre d'Agathange, „Revue de Etudes Arméniennes“, VIII, Paris, 1971.

<sup>9</sup> «Վարք» բառը թեև կարող է լրիվ շարտահայտել այս խմբագրության էությունը, այսուհանդերձ, նկատի ունենալով, որ Ժ. Գարիտը, Ն. Ակինյանը և շատ մամանակակից բանասերներ այս բառն արդեն որդեգրել են, խառնաշփոթությունից խուսափելու համար մենք ևս Վարք ենք կոչում այս խմբի բոլոր խմբագրությունները (հունարեն Վարք, արաբերեն Վարք, Օքսֆորդյի Վարք և Քարշունի Վարք, ըստ արդեն ընդունված ձևերի): Ըստ այս նույն սկզբունքի, Ագաթանգեղոսի մեզ հայտնի խմբագրության թե՛ հայերեն բնագիրը, թե՛ թարգմանությունները կոչվում են հետևյալ ձևով՝ հայերեն Ագաթանգեղոս, հունարեն Ագաթանգեղոս և արաբերեն Ագաթանգեղոս:

Գրիգոր Լուսավորչինն է (Վ. ար.): Ձեռագրի երրորդ մասը Աստվածաշնչից որոշ մասեր է պարունակում (Գիրք Ելից և այլն):

Ձեռագրի վերջում չկա հիշատակարան կամ թվական, քանի որ վերջին էջերը պակասում են: Գրության ձևը XII—XIII դարերին հատուկ նախի է: Թեև գիրը հստակ է, բայց շատ էջեր վերևից (Լջերի իրար հանդիպման կողմում) վնասված են, և գրությունը ջնջված է:

Ագաթանգեղոսի արաբական խմբագրությունը (Վ. ար.) զբաղեցնում է այս ձեռագրի 119բ—198ա էջերը: Համեմատելով Ն. Մառի հրատարակած ձեռագրի հետ, գտանք, որ սա նույն ձեռագիրն է (գլխական շնչին տարբերություններով), միայն քեզ ամբողջական է և ունի նրա սկզբնական պակասող մասը: Այդ սկզբնական մասը մեր ձեռագրում զբաղեցնում է 25 էջ (119բ—131բ):

Այս նորահայտ էջերը պարունակում են Ագաթանգեղոսի պատմության հետևյալ մասերը (ըստ հայկական գրաբար բնագրի):

«Ստիպելն Տրդատայ զսուրբն Գրիգոր պաշտօն տանել Անահտական պատկերին և հրաժարումն նորա և պատասխանի առ արքայ (պարբ. 48—67):

Սպանալիք Տրդատայ և առաջին շարժարանք սրբոյն Գրիգորի. գայլ ի բերան շառաշեղջ աղի ի վերայ ողին. գելոցք կրծից (պարբ. 68—73):

Երկրորդ շարժարանք. կախելն գլխիվայր, ծխել ի ներքոյ աղբ և գան բրօք դալարովք: Աղօթք Գրիգորի ի կախաղանին (պարբ. 74—98):

Երրորդ շարժարանք. կոճեղք փայտից ըստ ուրբի խոտոտաց ոտիցն սյնդեալք առատակօք: Չորրորդ շարժարանք...» (պարբ. 99—103):

Վ. ար. ունի հետևյալ վերնագիրը «Սա վարքն է սուրբ Գրիգորիոսի (Աղրիղուրիոս), որն ուսուցանեց Հայաստանում (Արմինիա) և նրա գավառներում: Նրա բարեխոսությունը պահպանի մեզ, ամեն»: Դրանից հետո սկսում է «Խոսքով և Տրդատ» հատվածի շատ հակիրճ շարադրանքը:

Վ. ար. նորահայտ էջերի համեմատությունը Ա. հայ. և Վ. հուն. հետ ցույց է տալիս նրա մերձակցությունը հայկականին: Հունականից նա բոլորովին հեռու է, թեպետև հայկականի հետ չի նույնանում: Այսուհանդերձ, երբ համեմատում ենք Վ. ար. այս էջերը Ա. ար. հետ, տեսնում ենք, որ նրանից նույնպես բոլորովին հեռու է իր բառապաշարով ու ոճով:

Մեր ասածը պարզ դարձնելու համար բերում ենք երկու նմուշ, տալով նույն հատվածը նախ Ա. հայ., ապա մեր արաբերեն ձեռագրից և վերջապես Վ. հուն.:

ա) Ա. հայ. (պարբ. 69).

Եւ ետ կապել զնա ձեռս յետս և արկանել գայլ ի բերան նորա և ետ կախել շառաշեղս աղի ի վերայ ողին նորա և տալ գելոցս կրծից նորա և արկանել առասանս ի կապս կրծից գելարանացն, կապել և համբառնալ ի բարձրաւանդակ տանիս ապարանից որմոյն մեքենայիք: Եւ կայր պրկեալ կապեալ այնպէս զաւուրս եօթն:

Ձեռ. 124բ.

Շատ զայրացալ թագավորը և հրամայեց, որ ձեռքերը ետևը կապեն, բերանին սանձ դնեն: Սոժոռակին աղի բեռ դրեցին, կրծքին զոտիով կապեցին և պարաններով [կապած] վերև բարձրացրին մեքենաներով: Այս վիճակում կախված մնաց յոթ օր:

Վ. հուն. (պարբ. 12).

Այն ժամանակ նա հրամայեց բարձր կախել սրբին, քերել նրա մարմինը, աղ դնել ու քացախ թափել: Եվ թշվառականը հրամայեց, որ այդ ամենասարսափելի պատիժը տևի երեք օր:

բ) Ա. հայ. (պարբ. 74).

Եւ յետ այսորիկ հրամայեաց կախել զնա գլխիվայր զմիոյ ոտանէն զի մինչ դեռ կայցէ գլխիվայր՝ ծխեսցեն ի ներքոյ նորա աղբ, և արբցէ գան սաստիկ բրօք դալարովք. եւ տանջեցին զնա տասն այր ըստ հրամանի թագաւորին. և կայր նա կախեալ այնպէս աւուրս եօթն:

Ձեռ. 126ա.

Թագավորը լցվեց զայրույթով ու հրամայեց, որ մեկ ոտքից գլխիվայր կախեն, նրա տակը աղբ վառելով ծուխ առաջացնեն ու գանահարեն գավազաններով: Կատարեցին այն և նրան հաջորդաբար տասը տղամարդ ծեծեցին, ինչպես հրամայել էր թագավորը: Այսպես կախված մնաց յոթ օր:

Վ. հուն. (պարբ. 14).

Թագավորը, տեսնելով սուրբ Գրիգորիոսի տոկունությունը և պատրաստակամությունը, լցվեց զայրույթով, և հրամայեց սրբին կախել անկոտորից, վառել աղբ և քթին ծխարկել, որպեսզի շնչելով զարշահոտությունը մեռնի:

Այժմ, երբ Վ. ար. ամբողջովին ունենք ձեռքի տակ, կարելի է ավելի որոշակիորեն խոսել նրա ծագման սասին: Այս ասպարեզում Ժ. Գարիտը չորս սլրպտումներ է կատարել և առայժմ պարզված է, որ Վ. ար. մի մասը Վ. օքր. թարգմանությունն է, մի ան մասը՝ Վ. հուն. է թարգմանված, իսկ կան նաև անորոշ հատվածներ<sup>10</sup>: Նորահայտ էջերը համեմատելով գոյություն ունեցող խմբագրությունների հետ, մենք եկանք այն եզրակացության, որ դրանք ևս մասամբ վերջին դասին են պատկանում:

Այսպիսով, կարելի է ներկայացնել հետևյալ համեմատական տախտակը.

| Վ. ար. մասերը (պարբերություններով)                                                 | Ծագումը          |
|------------------------------------------------------------------------------------|------------------|
| Նորահայտ էջեր և 1—24 (Գրիգորի վկայաբանություն և Հոփսիմյանց վկայաբանության մի մասը) |                  |
| 25—44 (Հոփսիմյանց վկայաբանության մնացած մասը և Գրիգորի քարոզի մի մասը)             | Վ. օքր. 76—95ա   |
| 45—59 (Գրիգորի քարոզը)                                                             | Վ. հուն. 68—82   |
| 60—62                                                                              |                  |
| 63—79 (Գրիգորի Քարոզի մնացած մասը)                                                 | Վ. օքր. 96—113   |
| 80—161 (Դարձ աշխարհիս Հայոց)                                                       | Վ. հուն. 87—173  |
| 162—166 —»—                                                                        |                  |
| 167—185 —»—                                                                        | Վ. հուն. 174—192 |
| 186—187 —»—                                                                        |                  |
| 188 (Վերջաբան)                                                                     | Վ. հուն. 199     |

Վ. ար. առաջին կեսը (մինչև պարբ. 79) մեծ մասամբ ծագում է Վ. օքր.: Դեռ անորոշ է մնում միայն սկզբից մինչև պարբ. 25 և պարբ. 60—62, որը Վ. օքր. չունի: Այս ծագումն անորոշ հատվածները (մանավանդ սկզբնական մասը) Ա. հայ և Ա. հուն. այնքան մոտիկ են, որ կարելի է ենթադրել, թե պարզապես փոքր կրճատումներով վերցված են Ազաթանգեղոսի մեզ հայտնի խմբագրությունից:

Սկսած պարբ. 80-ից, այսինքն Հայոց դարձի պատմության սկզբից, արդեն Վ. ար. թարգմանված է Վ. հուն.: Կան երկու փոքր հատվածներ (162—166 և 186—187), որոնք Վ. հուն. մեջ չկան և անորոշ է, թե որտեղից են ծագում: Այստեղ ևս, ելնելով այն մոտիկությունից, որ Վ. ար. այս հատվածներն ունեն Ա. հայ. հետ, կարելի է կրկին ենթադրել, որ սա էլ փոքր կրճատումով վերցված է մեզ հայտնի հայերեն բնագրից:

Այսպիսով, Վ. ար. ունի հիմնականում երկու աղբյուր՝ Վ. օքր. և Վ. հուն., իսկ բացի դրանից, հավանաբար, նաև Ա. հայ.:

Արաբական խմբագրության (Վ. ար.) նորահայտ էջերը, լինելով նրա սկզբնական մասը, մեզ հիմք են տալիս Վարք կոչված խմբագրությունների խմբի մեջ որոշել Ազաթանգեղոսի առաջին հատվածի (խոսքով և Տրդատ) վիճակը: Այս խմբի մինչ այժմ հայտնի խմբագրությունների մեջ սույն հատվածը այս կամ այն չափով կա, սակայն ակներև է, որ աշխարհիկ բովանդակություն

<sup>10</sup> G. Garitte, Vie grecque, էջ 241—242.

ունեցող այս նյութը նրանց համար երկրորդական նշանակություն ունի: Վ. հուն. այն բոլորովին չունի և այդ մասին երկու խոսքով հիշվում է վերջին մասում. Վ. ար., ինչպես տեսանք, շատ հակիրճ ձևով ամփոփում է ամբողջ նյութը, իսկ Վ. օքր. (այժմյան վիճակում) այս հատվածը պարզապես արտագրված է հենց Ա. հուն.: Բացառություն է կազմում առերեսներից թարգմանված Վ. քրշ., որը պարունակում է այն ամբողջովին:

Այժմ ձեռքի տակ ունենալով Վարք կոչված խմբագրությունների խմբից չորս բնագիր (Վ. հուն., Վ. ար., Վ. օքր. և Վ. քրշ.), կարելի է ավելի պարզ ձևով դնել խմբագրությունների այս խմբի ծագման, այսինքն մեզ չհասած հայկական բնագրի էության հարցը:

Ագաթանգեղոսի այս «կորած» հայկական խմբագրության հարցում մեծ չափով մեզ օգնում է Մովսես Խորենացին: Նրա Պատմության մեջ երկրորդ գրքի Կէ գլխից մինչև այդ գրքի վերջը առատորեն մեջբերված են Ագաթանգեղոսից քաղված տեղեկությունները: Հենց Կէ գլխի վերնագիրն է՝ «Եթէ որպէս Ագաթանգեղոս պատմեաց համառօտ»<sup>11</sup>: Այս փոքրիկ գլխում նա համառոտում է Ագաթանգեղոսի առաջին հատվածը (Խոսքով և Տրդատ): Խորենացին նույնիսկ բառացի մեջբերումներ ունի Ագաթանգեղոսից (օրինակ՝ Արտաշիր արքայի խոստումը Անակ Պարթևին)<sup>12</sup>: Միաժամանակ Խորենացին ավելացնում է, որ Ագաթանգեղոսը խոսել է համառոտ, իսկ ինքը պատմելու է մանրամասն:

Բոլոր այն դեպքերում, երբ գլխի վերջում ավելացնում է «որպէս ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս» կամ նման արտահայտություն, պարզորեն երևում է, որ դա Ագաթանգեղոսի գրքից է քաղված: Այսպիսի մի քանի պարագաներ կան, որոնք չափազանց կարևոր են Ագաթանգեղոսի բնագրի ուսումնասիրման համար:

Ամենահետաքրքրականը այն տեղեկություններն են, որոնց մասին թեև գլխի վերջում Խորենացին նշում է, որ Ագաթանգեղոսից է քաղել, սակայն Ագաթանգեղոսի մեզ հայտնի խմբագրության մեջ դրանք չկան: Օրինակ, խոսելով Հռոմի կայսրերի կողմից քրիստոնեությունն ընդունելու մասին, հիշում է Սեղբեստրոս պապին<sup>13</sup>: Այս տեղեկությունը բանասերներին առեղծվածային էր թվում, քանի որ Ագաթանգեղոսի մեր ունեցած խմբագրությունը Սեղբեստրոսի անունը չի հիշում: Սակայն Վ. ար. հայտնաբերումից հետո արդեն պարզ դարձավ, որ Խորենացին մտացածին անուններ չի տալիս: Իրոք այնտեղ հիշվում է Հռոմի պապ Սեղբեստրոսը<sup>14</sup>: Վերջինս հիշվում է նաև Վ. հուն. մեջ<sup>15</sup>:

Խորենացին հիշում է Գրիգոր Լուսավորչի կնոջը՝ Մարիամին, որը Դավթի դուստրն էր: Սա երկու երեխաներ ունենալուց հետո քաշվում է վանք և այլն: Այս բոլորը կա նաև Տարոնի պատմության (Զենոբ Գլակ) մեջ, սակայն բանն այն է, որ գլխի վերջում պատմահայրն ավելացնում է «որպէս ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս»<sup>16</sup>: Այս հատվածը ևս չկա Ագաթանգեղոսի մեզ հայտնի պատմության մեջ, սակայն այս առեղծվածը ևս լուծվեց, երբ հայտնաբերվեց Վ. հուն., ուր խոսվում է Լուսավորչի կնոջ մասին, միայն թե անունը Յուլիտա է (Յուդիտայ)<sup>17</sup>:

Վերջերս լուծվեց ևս մի առեղծված, որը կապված է դարձյալ այդ կարգի տեղեկությունների հետ: Խոսելով Գրիգոր Լուսավորչի կենսագրության մասին, Խորենացին հիշում է, որ Անակ Պարթևը կանգ է առնում Արտազ գավառում, «ուր յայտնեցան նշխարք սրբոյ և մեծի առաքելոյն մերոյ Թադէի»<sup>18</sup>: Ապա Թադեոսին որպէս առաքյալ հիշելուց հետո անմիջապես ավելացնում է. «Իսկ զմնացեալսն ի զրուցացս ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս»<sup>19</sup>: Սակայն Ագաթանգեղոսի պատմության մեջ այժմ չկա Թադեոսի նույնիսկ անվան հիշատակումը: Բարեբախտաբար վերջերս նոր հրատարակված Վ. քրշ. սկսվում է հենց Թադեոսի հակիրճ վկայաբանությամբ:

11 «Նովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», աշխ. Մ. Աբելյան, էջմիածին—Տփղիս, 1913:

12 Նույն տեղում, էջ 203:

13 Նույն տեղում, էջ 227:

14 Mapp, *սյմ.* աշխ., էջ 142:

15 Garitte, Documents, էջ 107 (§ 176):

16 Խորենացի, գիրք Բ, գլ. 2:

17 Garitte, Documents, էջ 72 (§ 97): Ակադ. Ս. Երեմյանը մեզ հաղորդել է, որ վրացական ծառընտիրներում այս անունը ծանոթ է Իվլիտա (ივლიტა) ձևով:

18 Խորենացի, գիրք Բ, գլ. 27:

19 Նույն տեղում, էջ 212:

Խորենացու մոտ կան նաև բաղմամբիվ այլ նման դեպքեր, որոնք արդեն մի ամբողջ խումբ են կազմում: Օրինակ, առանձին գլուխ է նույնի վարքը, որի վերջում դարձյալ գրված է՝ «որպէս ուսուցանէ քեզ Ազաթանգեղոս»<sup>20</sup>: Մինչդեռ Ազաթանգեղոսի պատմության մեջ նույնի անունն անգամ չկա:

Ո՞րն է պատմահոր աղբյուրը այս բոլոր նյութերի համար, որոնք չկան Ազաթանգեղոսի պատմության մեջ, բայց հիշվում են որպես նրանից քաղված տեղեկություններ: Վերոհիշյալ երեք դեպքերը (Սեղբեստրոս, Լուսավորչի կինը և Թադեոս) պարզորեն ցույց են տալիս, որ եղել է Ազաթանգեղոսի մի այլ խմբագրություն, որը տեսել է Խորենացին, տեղեկություններ է քաղել նրանից և ասլա գլխի վերջում ավելացրել, որ իր աղբյուրը Ազաթանգեղոսն է:

Բացի Խորենացուց, Ղազար Փարպեցին ևս իր թղթում ունի այս նյութին առնչվող հետաքրքրական տողեր: Հաջորդում են եկեղեցականների մասին խոսելուց հետո ավելացնում է, որ այդ մասին «ի Պատմութեանն Նահատակին Գրիգորի դրոշմեալ յիշատակէ»<sup>21</sup>, սակայն նման նյութեր չկան Գրիգորի պատմության մեջ, այսինքն Ազաթանգեղոսի բնագրում:

V դարի հեղինակներից Փավստոսի մոտ ևս կա մի ակնարկ, որն անուղղակիորեն առնչվում է այս հարցին: Նա հիշում է, որ Հայոց դարձի պատմությունը՝ Թադեոս առաքյալից մինչև Գրիգորի վախճանը և Սանատրուկ թագավորից մինչև Տրդատ թագավորը, իրենից առաջ ուրիշների կողմից գրված է: Իրոք, վերջերս լույս տեսած Վ. քրշ. սկսվում է հենց Թադեոսի և Սանատրուկի հակիրճ պատմությամբ, թեպետև, ինչպես ասվեց, Ազաթանգեղոսի պատմության մեջ Թադեոսի անունն անգամ չի հիշատակված:

Սակայն, ինչպես ասացինք, քանի դեռ չկային վարք կոչված խմբագրությունները, Խորենացու և այլոց սոս-2 եղած այս տեղեկությունները բանասերները համարել են թյուրիմացություն կամ անհասկանալի խոսքեր:

Վերոհիշյալ չորս բնագրերի հայտնաբերումից հետո նրանց հրատարակիչները (Ն. Մառ, Ժ. Գարիտ և Մ. Վան էսբրուք) ուսումնասիրեցին այս բոլորի և Ազաթանգեղոսի մեզ հայտնի խմբագրության փոխհարաբերությունները: Ն. Մառը մեզ չհասած խմբագրության (վարք) հարցը լուծելու համար առաջադրեց հետևյալ պատկերը. V—VI դարերում գոյություն է ունեցել մի հայկական վաղ խմբագրություն (հեղինակ՝ Մեսրոպ Մաշտոց կամ այլ ոք), որը մեզ չի հասել: Ազաթանգեղոսի մի երկրորդ խմբագրություն կազմավորվել է VII—VIII դարերում Տաթի քաղկեդոնականների միջավայրում, որը հենց իր հայտնաբերած խմբագրությունն է. վերջապես, VIII դարում ձևավորվում է երրորդ «ազգային» խմբագրությունը, որը մեզ հասած հայերեն հայտնի բնագիրն է<sup>23</sup>:

Սակայն նոր ձեռագրերի հայտնաբերումը միայն մասամբ հաստատեց այս տեսությունը: Ժ. Գարիտը Վ. հուն. ուսումնասիրելուց հետո ժխտեց Մառի այն ենթադրությունը, թե վարք կոչված խմբագրությունը քաղկեդոնականների միջավայրում է գրված: Մառի տեսությունը ընդունելի է իր խմբագրությունների հաջորդականությամբ, բայց ոչ դրանց տրված ժամանակով: Ազաթանգեղոսի մեզ հասած խմբագրությունը անկարելի է տանել VIII դար, քանի որ նրանից կատարված հունարեն թարգմանությունը VI դարից է<sup>24</sup>, նույնպես և վարք կոչված խմբագրությունը (նկատի ունենք

20 Նույն տեղում, գիրք Բ, գլ. 22: Այս հատվածը հայ մատենագրության մեջ միշտ էլ համարվել է Ազաթանգեղոսին վերաբերող նյութ: Հետաքրքրական է, որ Մատենադարանի 6632 թվահամարն ունեցող ձեռագրում, ուր բոլորովին զանց է առնված վարդապետությունը, փոխարենը այլ նյութերի հետ, դրված է նույնի մասին Խորենացու պատմության այս գլուխը:

21 «Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց», էջմիածին—Տփղիս, 1904, էջ 203:

22 Հետաքրքրական է նշել, որ Գեորգ Ասորու համառոտ շարադրանքը ևս ավելի մոտ է այս վարք կոչված խմբագրություններին (տե՛ս Garitte, Documents, էջ 420—428):

23 H. M a r r, աշգ. աշխ., էջ 182:

24 Ն. Ադոնցը նույնպես ենթադրում է, որ գոյություն է ունեցել Ազաթանգեղոսի երեք խմբագրություն. Ա խմբագրություն, V դար. սրա նյութերը հավաքել է Մեսրոպ Մաշտոցը, իսկ խմբագրել է Կորյունը: VI—VII դարերի սահմանագլխին, հավանաբար, հղնակ երեցի շանքերով կազմվել է Բ խմբագրությունը: Գ խմբագրությունը, պաշտոնապես ընդունված հայ եկեղեցու կողմից, ձևավորվել է VIII դարի սկզբին (տե՛ս Н. Адонц, «мечия в эпоху Юстиниана», СПб, էջ 341—342 (ծան. 1):

հայկական կորած բնագիրը) չի կարելի տանել VII—VIII դարեր, երբ նրա հունարեն թարգմանությունները VI դարի վերջերում են կատարված:

Բուզանդը, Փարպեցին և մանավանդ Խորենացին ծանոթ են, ինչպես տեսանք, Ազաթանգեղոսի հենց այն խմբագրությանը, որի հայերեն բնագիրը դեռ հայտնի չէ, բայց ունենք հունարեն և արաբերեն թարգմանությունները: Այդ հայերեն խմբագրությունը մեղ ծանոթ հայկական խմբագրության հետ մեկտեղ V դարի ստեղծագործություն է և, հավանաբար, նրա առաջին կեսում է հորինվել: Դա իր տեղեկություններով ավելի ընդարձակ է եղել, քան մեզ հասած խմբագրությունը և նրա հաղորդած նոր տեղեկությունները մենք գտնում ենք Խորենացու և այլոց մոտ:

Ն. Մառը ճիշտ էր նկատել, որ Ազաթանգեղոսի վերջին երկու խմբագրությունները երկու տարբեր միջավայրերում են հորինված և տարբեր հոսանքների են պատկանում: Սակայն եթե դրանցից վերջինը (մեղ ծանոթը) իրոք պաշտոնական եկեղեցու ընդունած խմբագրությունն է, ապա մյուսը ոչ թե քաղկեդոնական միջավայրում է ստեղծվել, այլ, ամենայն հավանականությամբ, հարավային կամ ասորական կոչված հոսանքին է պատկանում<sup>25</sup>:

Այդ մասին է վկայում Թադեոսի Վկայաբանությանը նվիրված հակիրճ հատվածի առկայությունը Նորհայտ Վ. քրշ. մեջ: Այստեղ պատմվում է թե՛ Թադեոսի, թե՛ Գրիգորի մասին, ինչպես ակնարկում է հենց Փավստոս Բուզանդը: Հայ եկեղեցու մեջ գոյություն ունեցող երկու հոսանքներից (հարավային կամ ասորական և արևմտյան կամ հունասիրական)<sup>26</sup> հարավային-ասորական հոսանքը երբեք չի հակադրվել Գրիգորին, բայց նրա հետ մեկտեղ միշտ հիշել է նաև Թադեոսին, իսկ արևմտյան-հունասիրական հոսանքը ձգտել է ամեն կերպ մոռացության տալ Թադեոսին, հիշելով միմիայն Գրիգորին: Ահա այս վերջին հոսանքի ներկայացուցիչների ընդունած խմբագրությունն է մեզ հասած հայերեն Ազաթանգեղոսը: V դարում Ազաթանգեղոսի մեղ չհասած խմբագրությունը, բնականաբար, ծանոթ պիտի լիներ բոլորին, բայց Եփեսոսի ժողովից հետո (431 թ.) և մանավանդ նեստորականների հետ սրված հարաբերությունների շրջանում (V—VI դարեր) աստիճանաբար այն մոռացության պիտի տրվեր: Հայտնի է, օրինակ, ասորերենից թարգմանված Աստվածաշնչի ճակատագիրը Եփեսոսի ժողովից հետո, երբ արևմտյան հունասիրական հոսանքը նույն մատյանը հունարենից կրկին թարգմանելուց հետո, մոռացության տվեց առաջին թարգմանությունը, որի միայն հետքերն են մեզ հասել<sup>27</sup>: Նույն ճակատագիրը պիտի վիճակվեր նաև Վարք կոչված խմբագրությանը, որի հայերենն ոչ մի օրինակը մեզ չի հասել, իսկ հունարենն ու արաբերենն լեզուներով արդեն չորս տարբեր խմբագրություններով մեզ հայտնի է:

Առանձնապես ուշագրավ է այն պարագան, որ Վարք կոչված խմբագրություններից ոչ մեկը մյուսին չի համապատասխանում: Բանն այն է, որ նրանք V դարի հին խմբագրության ոչ թե բառացի թարգմանություններ են, այլ հավանաբար նրանից քաղված համառոտ խմբագրություններ: Այս չորս խմբագրությունները իրարից տարբեր լինելով, հնարավորություն չեն տալիս որոշելու, թե ինչպիսին է եղել V դարի հայկական (մեղ չհասած) բնագրի<sup>28</sup> ճիշտ էությունը, որի պատճառով չենք կարող որոշակի կերպով ցույց տալ նույն դարում գոյություն ունեցող հայկական այդ երկու խմբագրությունների փոխհարաբերությունը:

Ստորև տալիս ենք Նորհայտ էջերի բնագրի լուսանկարները և դրանց թարգմանությունը: Վերջինում կլոր փակագծերի մեջ տրված են ձեռագրերի էջերը և անունների համապատասխան ձևերը, իսկ քառակուսի փակագծերի մեջ՝ հստակության նպատակով մեր ավելացրած բառերը:

Ա. Ն. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

25 Եթե ընդունենք Ազաթանգեղոսի IV դարի նախնական խմբագրության գոյությունը, ապա դարձյալ ընդունելի է Ն. Մառի երեք խմբագրությունների տեսակետը (անկախ ժամանակագրությունից)՝ նախնական խմբագրությունը, Վարք կոչված խմբագրությունը և, վերջապես, մեղ հասած պաշտոնական խմբագրությունը:

26 Տե՛ս II. Ա Ղ Ո Ւ Մ, նշվ. աշխ., էջ 345—353:

27 Տե՛ս Հ. Մ Ե Լ ք ո ն յ ա ն, Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1970, էջ 109—128:

28 Հավանաբար այս հին խմբագրության անունն է Գիրք Գրիգորիսի (Ղազար Փարպեցի, 1), որը այս խմբագրության դուրս մղվելուց հետո մոռացվում է և VII դարից այս կողմ այլևս չի հիշվում:

وكان ذلك على عهد الملك ديو فلسطين  
الطامعي اذ كان على مدينة روميه . وكان  
على الفرس والارمن ملك يقال له برطاط  
واخبروا الملك برطاط ان في بلادهم انسان  
يقال له اعريغوريوس بعد المسيح . يستحق  
بالالهة . وان الملك وجه في طلبه . فلما  
احضروه اتوا عده الملك باصناف العذاب  
ويهدده . وقال له ان لم يترك عباده  
المسيح ويطيعني . وبعد القتي فاني  
لا اعصم في عذابك ورناطك وحليتك

من روميه . وفيما هو في ذلك  
خبر من ديفليطايوس ملك روميه بعباده  
قائلا ان قد خرج على من عارساء فلذلك  
بعث اليه برطاط ليحده في خربة لان برطاط كان  
يصير بالحرب عند ذلك امر مجلس اعريغوريوس  
وخرج في الحرب وانه غلب وطفرة . ورجع  
الى مله ارمينية . وبرز في مدينه يقال لها  
ارزن وكان فيها هيكلا لادطامس الذي  
كانوا يحجوه . وصيرب مصاربه على المهر  
الذي يقال له الدريت . وكان يقرب لها القرابين  
فلما جلس على العرش وسرب وطابت نفسه .  
وفرح ذكر الطوبى ان اعريغوريوس وانه امر  
باحصاره . فقال له الملك يا اعريغوريوس  
خذ لسان وقوده واعصاها فاذهب الى هيكلك

من بعد ما فعلها فاما الملك  
فقال له الملك انت عرب وليس لك في  
البلاد ميراث وحسبنا ما كرمناك وحفظنا  
لك من بخل ولكن كثير فكيف اسهرت ان  
تعد الاله ليس اعده انا. وانه امر بحسه في  
ذلك اليوم فلما كان العشاء امر باحضاره  
فقال له كرمك من الزمان منذ رايتك وقد  
عرفت انك من كل قلبك كبتت علي وانا  
اسكرت واسكرت اعمالك قد كنت عرفت  
ان كفايتك على قدر اعمالك فسمع لك ان  
نطعمي فلجانه اعز بعور يوس وقال له  
مكتوب نعملوا العبد مرصاه نوالدهم  
فلان يكون انت كاسي وكما شهدت لي  
ان خدمتك من كل نفسي فاما امانتي

يكرمني وعيادتي. ما خيار اعطيت  
الا لحي الله الحق لانه وحده خالق السما  
رضي والملائكة له يسبحوا. والانس  
ما كن في الارض له بعد ويسجد وتعمل  
مرضاته. قال الملك لما اذا اهلكنا اعمالك  
الذي انا عاروها. واراك تلجئ ان اسكنك  
بل ما اريد ان اكرمك. واعزتك بل ما اريد  
ارفع درجتك. وبعد ذلك اسلمك الى الموت  
واعدمك الحياه. ان لم نطعمي وتعد الهى  
خاصه لا رطاس امر الالهه الكبيره الذي  
سبحنا ولجميع الامر الذي بها يقوم العالم  
وخل الملوك يكرمونها. وكذلك ملك  
روميه. فقال له اعز بعور يوس. انا من  
كل ولي احذقك. واطن ان عملي ما يذهب  
شهامه مكتوب انه العبد اخدموا موالدي

منهم لا يكره من السماوي لا باحد  
وليس محلك كتاب يدايد الجزا خدمي يد  
ولكن من حال السما وما يري وما لا يري  
وانت بوعدني بدل المكافاة بصر احدا الى  
فاعلم انك بذلك بصر في الفرج الذي اعده لي  
المسيح الاله الى الابد وملكه لا يزول واس  
بدل كرامتي التي اوعدني بريد بعدني  
وبه تقدمي الى فرج الملايكة وامام واعده  
لي بالخس والرباط فاعلم انك بذلك تقدمني  
الى الطوبى اذ قد اساهلت الرباط مثل سبدي  
وبذلك افرج واسترني يوم محبة العظيم  
اسطرارك سعي ما يدرك وما يعلم انك  
بذلك اهد لي مع ابي المومن ابراهيم ومع  
جميع القديسين فائدة الفرج في ملك الاله  
وسوعدني اباي بالموت المعز بعدني في طعمه

ومستقر هذا الرسل والشهداء  
ومحبس الله وفوقك انك تقدمي الى الجاه الذي  
يري فانك بذلك تقدمي الى الامانة المستقيمة  
الذي يورث حياة الدهر لا حياة الله فاما اس  
وكل من بعد الاصنام الذي ليس لهم انفس  
صنعه ابادي ناس ويقولون انهم هم  
الالهة الكبره اعلم ان الامانة تنعلا ونور  
الحق يظهر فكاتبوا المحالين في ذلك الزمان  
بعدوا والشايطان يستهوهم واعمال حينهم  
طعوا بها الناس حيي بها هاكل لصنعه  
الابادي اعني الاصنام وسجدوا لهم الذي ليس  
بابل شر حبر ولا سر ولا بكرموا الذي بعدونهم  
واقنوا الذين بعدوهم كمثل ولد عقوقكم  
الذين يروهم بغير معرفه بركم الله الذي  
المرعد في الخيرات وصار لهم بعدونهم

محبته وخدمته  
لخدمته الانسان فاعلم  
بما فيه وطاعه اعبد الاله خالق الكل. و  
يسوع المسيح ربنا وروح القدس الحي الذي  
هو مع الاب والابن صانط الكل وهو قادر  
بمسب وحي الكل وحياساخي فهي الى الابد  
مجل عبادنا لله محب خلاصنا. ها هنا ارمنا  
سور حيا. وهو تاسيد وقيامته اور انا  
طريق القيامه. ونحن الذي مجله فهو حيا  
يوم مجيئه المجيد وناخدمه المكا فاه العيده  
مجل مخالفين العدل وما فعلوا بنا فقال الملك  
هوذا يقول انت ما تريدني جزا لكرامه  
ولا احتاج اليه. انا اعلم انك تنها وتك  
لذلك ليس اخرج الي كرامتي هوذا البعك  
الى حين ترجوا المكا فاه مع الذين ما نوا قبلك

محبته وخدمته  
بما فيه وطاعه اعبد الاله خالق الكل. و  
يسوع المسيح ربنا وروح القدس الحي الذي  
هو مع الاب والابن صانط الكل وهو قادر  
بمسب وحي الكل وحياساخي فهي الى الابد  
مجل عبادنا لله محب خلاصنا. ها هنا ارمنا  
سور حيا. وهو تاسيد وقيامته اور انا  
طريق القيامه. ونحن الذي مجله فهو حيا  
يوم مجيئه المجيد وناخدمه المكا فاه العيده  
مجل مخالفين العدل وما فعلوا بنا فقال الملك  
هوذا يقول انت ما تريدني جزا لكرامه  
ولا احتاج اليه. انا اعلم انك تنها وتك  
لذلك ليس اخرج الي كرامتي هوذا البعك  
الى حين ترجوا المكا فاه مع الذين ما نوا قبلك

مكان في الاحياء والا موانع  
 والطلوع في السور هو الملك السلطان والظلم  
 هو الذي مات بهواه وقام في ربه  
 الموت واطهر القيامه التي يكون للموت  
 هو حادثا عظام قد يسهل لانه هو القيامه  
 والحياه هو الحي والحادثا احصاد الناس واللا  
 نكده هم الذين يمدسوه دائما بقدر هذو  
 واما ساعه دنك فاما ما سحر اسم فطاله  
 لانكم لم تعرفوا حالكم بل منكم عبيد  
 للسلطان وعبدكم الخلقه دون الخالق  
 انكم مثل الفرس والبغل الذي لا يفهم لهما  
 واسر من الحمار والنهر ما لكم عمل ولا  
 معروفه لانكم ما فهمتم الله خالقكم  
 لذلك تكون في محبه الخافه والعامه والرياء  
 بدل الحيي حل من يعرفه فاما قواك التي

التي هي الفتيك من النعم هو الضامه حلا  
 هو الذي لا يفهم صيغه الابادي مهمل  
 ذلك فكلهم يكونوا صانعيهم ومن  
 اليها لم يعرف معرفه بسهموا اليهم  
 لهم افواه ولا يتكلموا غير فلا ينصروا  
 اذ ان فلا يسمعون ما حذر فلا يسمعون  
 ابادي ولا يخلصوا ارجل فلا يسمعون  
 لذلك قال النبي يكونوا مثلهم صانعيهم  
 وكل من يكل عليهم فلما سمع الملك  
 دالاه اغناط وقلاله مرار كثير  
 قد ضربك الاسعدي قد ادمي ويقول  
 ابو اعمالا يدي الناس واحتملك ارجل  
 بلاد جوعك وعبادتك لاله الذي  
 من انهم اكرمتمك فهو دال نقول  
 ان الله خير الخالق الذي يرى الكل والاله  
 صار غير الكل يعرف والفرقه لم الاله

ارطاس الباقية التي يهب الدنيا الحياه  
ودما حلق السما والارض وجماعه الالهه  
فلن عنهم انهم يعبر انفس ولا معروفة  
لهم ولنا ايضا ودفن وصبرنا من الدواب  
انا حيا الان عليك العذاب واصبر الوفا  
في حبسك لتعلم ان كلامك الذي تكلمت  
به عليك رجع وهذا اكبر منك ان مثلي  
تكلمك وقد جربتك حتى صرت بكلمتي  
كامه بكلمه لكني منك فاعراض  
الملك كثيرا وامر ان يكتفوا باده الى جلد  
وصرت في قفصه لجام وحماله حمل علي  
فقاه وربطوه عليه خزام الى صدره وسالوه  
بالجمال الى فوق بالمعصون واقام على هذه  
الحاله معلوق سبعة ايام وبعد ذلك امر  
الملك ان يحمل من ذلك العذاب ويحصد

احصر قد امدت ساق العذاب وقال له كيف  
قد رتبتم علي هذا العذاب الطويل هذه  
الايام الان قد جربتك مثل الفرس والبغل  
احملنا الحمل ووقفنا ولم نحرك ذلك كله  
فقد يفتك الالهه وقولك ان ليس لهم  
معروفه فمكذام كما فانك من هم وانا  
اقول لك ان لم تقبل ونوم بالالهه  
وادمنت علي قد يفتك اياهم اسر من هذا  
العذاب لحمل بك قال اعربهم يوس الالهه  
الالهه الذي يقول انت مجله هم هم اعمال  
ايادي الناس اصنام لا حس لها ولا حكمه  
مصنوعه من حشب وحجاره ونحاس  
فضه وذهب ما تكلموا فط ولا يدركها  
يعرفوا كرامتك لهم ولا يذوقونك  
وه هم قالوا لك نعدني انا معك بنا ما نعد

النفوس والاعمال التي لم تنسهم  
لي وحملك اناي الملح فاني اكل عني  
خالق السما والارض وابنه الوحيد يسوع  
المسيح وروح قدسه البرق طه هو الذي  
يعطيني برة الخفف الانصاع الذي هو ممثلي  
عطانا با في الى الابد الذي يرفع المتصعده  
في يوم المكافاه عند انقضاء الدهر ذلك  
الوقت ينج كل من قد تعف بالفرح الذي لا يورث  
كما اوعدنا والذي يعيدنا الاوتان سامهم  
الى العذاب الدائم كما قال النبي مجلدتهم انهم  
يرلوا مثل الحمر في العمق الكثير وقال ايضا  
مجل عباد الحسب ان النار تحرق كل حسب  
الغايه مع جميع الخطايين وقال ايضا مجل  
عباد الفضة والذهب فلن قضتهم ودمهم

بسم الرب الذي قال  
بسم جميع المذنبين اعني الخالسين  
ومن له متلك وان لللك املا رجز  
وان يعلق برجله الواحده منكس على الرايس  
يلجس تحت الزبل ويصوب بالقضبان  
فعلوا ذلك وتعا فوا في صريه عنفس انفس  
كما امر الملك فاقام معلق على هذه الحاله  
سبعه ايام وكان معلق وهو يصلي ويقول  
اشكرك يا رب لاني ما كنت مستاهل وقد  
اهلتي هذه العطيه لانك من الدهر احببت  
صعده يدرك واعطيتك الفردوس والنياح  
بغير وجع ولا موت خلقتنا لو انا حفظنا  
وصيتك الذي امرتنا الا ناكل من الشجره  
التي اقمنا عن اكلها ليس الشجره الذي  
اسمها الحياه هي كانت قادره بصر الحياه

انك الوحيد ان نحن حفظنا الوصية  
 اوصينا استاهلنا الحياه بغير تعب ولا وجع  
 ولا غم ولا هموم فلما كثر واسبى للبشر اورشليم  
 طريق القيامة مثل اخنوخ الذي رفع من  
 هاهنا الى الفردوس ولوا نحن حفظنا الوصية  
 لاستاهلنا الحيه وصبرنا الى الحياه الدائمه  
 مثل نوح وضا مسعين منك الملك الابي  
 مثلهم التي لم يراه عين ولم يخطر على قلب  
 بشري الذي اعد لمن ينظر يوم مجيئك  
 ولكن لما ابصر العدو كثره رافقت حسدا  
 تلك الكرامه التي وهبت لنا لانك قلت  
 انا الانسان على شبه صورتك وتمالك  
 خلقته فاما العدو بالاعمال واعوا الانسان  
 واخرجته من الحياه والياف الذي وهبته له

عدوى ودراسه  
 في  
 في  
 في

انك الوحيد ان نحن حفظنا الوصية  
 اوصينا استاهلنا الحياه بغير تعب ولا وجع  
 ولا غم ولا هموم فلما كثر واسبى للبشر اورشليم  
 طريق القيامة مثل اخنوخ الذي رفع من  
 هاهنا الى الفردوس ولوا نحن حفظنا الوصية  
 لاستاهلنا الحيه وصبرنا الى الحياه الدائمه  
 مثل نوح وضا مسعين منك الملك الابي  
 مثلهم التي لم يراه عين ولم يخطر على قلب  
 بشري الذي اعد لمن ينظر يوم مجيئك  
 ولكن لما ابصر العدو كثره رافقت حسدا  
 تلك الكرامه التي وهبت لنا لانك قلت  
 انا الانسان على شبه صورتك وتمالك  
 خلقته فاما العدو بالاعمال واعوا الانسان  
 واخرجته من الحياه والياف الذي وهبته له

ومثل البكر فابى للذي قلته عوا باللعنه والبر  
والخرف والرعده جاني العالم كذا في مثل  
الولود انك الوحيد المولود من الطاهر  
العددي بلح وجاه وبركه جاني العالم  
بور من نور حياه من حياه الذي انا  
ولس خديا لخمعا في هوته كما الازاد  
وتعي في السبع لاهوند كما ان يكون ولا ير  
من الدهر والى الابد بالاب وروح القدس  
من اجل حب الاسان وصار اسان لخاصه  
لصيرنا استاهل فرح لاهوند وحلفنا  
على صورته حتى الذي يصور الاصنام  
والذي يسجد لها ليعبد بهم اليه لجمعهم  
في لاهونه لان الناس طغوا وبركوه  
وصاروا يسجدوا للاصنام الذي لا يش  
لها وهو احد صورنا ورفعها على الصليب

حتى خديه الى صورته واعا صلبه  
وصيره مثل الصاوه وحسده صيره مام  
طهر للعالم كله حيا محله خديا كليا الى  
الي ما يده ملكه الذي لا زال لاهونه في محل  
الاصنام المحوده لخشيت نصيبه في وسط  
العالم حتى يرد الذين قد يعودوا يسجدوا  
لهذا الخشيت المحووس يسجدوا الصليب الذي  
محله تكلم النبي وقال صرن مثل الاصنام الذي  
لا سمع ومثل الاخوس الذي لا يسمع فاه وقال  
انما الصليب لسانى خنكي وصرف مثل اسان  
لسن في فمه جوات ومعل محبه الناس للاصنام  
البكر وصورة الالهه البطاله لذلك اسان  
الوحيد صار سبه اسان وارفع على الصليب  
وطهر للعالم ومثل ذلك كل القديسين  
للتبارين وفرحوا وملاوا وخصعوا

سجدس وكما كانت عبادة الناس يمشروا في  
 هناك الاوثان والذبايح الذين كانوا  
 يقدمونها للالهة الباطلة المردولين الذي  
 ليس لهم انفس ومن اجل ذلك دعوت  
 انت العالم بدينك ابنيك الوحيد. وقلت  
 عجلي قد دخلت فيه ودعوتني قد هبتهما  
 وكثر العرج بصلب ابنيك. وسعد  
 الدنيا من جسده الذي يحيى. والذي لم  
 يريد واخبروا العرس الروحاني مع ابنيك  
 الوحيد يسوع المسيح الاله. عذبت  
 لهم العذاب الذي لا يقا. وباركهم لاهوتها  
 بالنار التي لا تطفأ. وكما كانت عادتهم  
 يسربوا دم دبايحهم. فجعل ذلك اضع  
 دمه على الصليب. وبه افنكنا من عبوديه  
 خطايانا وردنا الى لاهوته وليس لنا سبل  
 على انفسنا حتى نطهر في شهوات الجسد بيه

ولا عمار يهدوا الناس الناس والناس المستطير  
 ينبغي لنا ان يكونهم فليس مثل الاله. ليس  
 مثل كرامته لاهوتك. ولا مثل مخافة وبهلا  
 لانهم ايمانهم بالجسد فقط. فاما ابنيك  
 الوحيد ربنا يسوع المسيح فهو قادر ان يهلك  
 النفس والجسد جميعا في جهنم. ولكن اطلب  
 اليك يا رب ان تعطيني قوه وصبر حتى  
 اصبر في كل حزن لخور على واصنع معي  
 رحمته كما صنعت مع الابرار الذي صلب  
 مع ابنيك. وبقدركم رحمته كسبك  
 الذي بها تحيا الصالحين والطلحين وعلى  
 قدر طول روحك لان شمسك تطلع على  
 الارواح والاشترار. ويمطر على الابرار  
 والخطايين. ومسك رجرك وتصنع رحمته  
 على جميع طغيانك. هيا عطايا الصبر  
 في هذا العذاب المر الذي انافه لا تظن

سخر لخدمتك وطلعت يهودية طاهر الذي  
 هو نور الامانة الذي وهبت لي واصبح  
 مرضاتك ولما اخرون المستكين عليك  
 والمبصرين باسمك الوحيد يسوع المسيح  
 وانت يا الهنا وسيدنا الذي قلت انا معكم  
 طول الايام حبا انقضا العالم لا تسامني  
 ولكن قومي في مرضاتك وطاعتك  
 لا صبر في هذا الجهاد محمل اسمك الكبير  
 لتفخر عندك يا مامنه بك وبسطروا الاعدا  
 الى قوه المنكسرين عليك نعم يارب اجعلني  
 في عداد قدسيك محل كبره يا فتك  
 كما ان تسامنا في خطايا ابهائنا واجدادنا  
 ولكن الهنا نعرف لا هوورك للالهك  
 بعبودية الاصنام ورحمتك طيفك لئلا  
 يعطينا ربحك الى الابد ولا يفقد علينا

عصمتك ولا يهلكنا ولا يهلكنا  
 هبلي قوه حين اسلمت من اجل اسمك الى  
 الموت واقوم في انبك النانه ربنا يسوع  
 المسيح نعم يا سيدي ما سكت الكل الذي  
 بكلا كل المنكسرين عليك وتعمل مرضاه  
 الذين يخافوك الهمني حفظ الامانه بك  
 وكون محافتك امام عياني لكما اخلص  
 من العذاب الدائم الذي قد عددته للمنافقين  
 والعريسين منك وهم سعي في حرق  
 الذي قد خلطني لارك انت طبيب اوجاعنا  
 ومداوي جراحاتنا وموسع على للضعفين  
 واخل المرطبين معزي الحزين وانت  
 المعيب اخل من قد اس منته وانت راحه  
 النعير سال كل العريقين فاستمع  
 مني يارب واستجب صلاتي واظهر  
 نورك في هذه الامه واضئ لموتهم

قصص من انجيل القديس متى  
معرفة لاهوتك المسيح. انشأ له  
الذي لا يموت وابرك الوحيد يسوع المسيح  
ابا وروح القدس  
وضيري انا  
احدا كلل مع احباك الذي جعل اسمك كلوا  
الذي هو نهر سريه قدامك واسماهل  
احطف على السحاب في لنا وحيدك لان  
لك السبع ولروح القدس الذي هو  
الداهرين امين مع هذه الصلاة صلا  
ادكان معلق. وبالعصى خسرو اعظامه  
كلها. وكان يصلي القديس والكتاب  
لحفظوا كلامه. وصلا ايضا كثير ولم  
ينوه. ونزكوه معلق وذهبوا  
فاعلموا الملك بكل ما انكلم القديس  
حضر نهر. فامرهم ان يزلوه ويوفوه

قدامه فلما وقف قدامه قال له الرضاظ  
الملك ابين لي كيف يكون بصراي  
ولا يكون مثلي كما كنت من صاك. ولذك  
اخبرت الموت. يا غريغوريوس. قال انا  
مستعمل بان اخرج من هذا الجسد واكون  
مع المسيح. واخرج بلحياه الدايمة فاسرع  
سراحي بالموت. قال الملك ليس كما تريد  
اصنع انا ولا افتلك بالعجله فنجوا من  
العذاب وتذهب الى الراحة. ولكن اعدك  
بكل سده حتى اخذ حق الالهه منك.  
لقد يفتك اياهم اذ لم يشهد لهم. وان الملك  
امر ان يحصروا حشيت ويسمروهم في  
رجليه وسدوه بالحبال مع حشيت من  
صدره الى رجليه. وكان يسيل الدم من  
اصابعه. فقال له الطائر كيف رايت

يا هذا يغفل هذا العذاب احباب الطوبى  
 وقال له . وهب لى من الامه يطفى  
 لانه ضابط الكل الذى به اعلى ولا يد  
 الشيطان . فلما سمع كلامه الملك امر  
 محله ان يجاوه عن الحشيب ويسمروا  
 مسامير في قدميه فمردك بالفعل  
 وامر الذين يعذبوه بان ياخذوا بيديه  
 ويمسكوه . وكان الدم يسيل من رجليه  
 وسيل الارض فقال له نرضا ط الملك ابن  
 الخلقه الذى لا ترى الذى كنت تقول  
 محليها احابه الطوبى وقال له نعم  
 الخلقه الذى لا ترى الامه يطفى  
 ويقوم بقوه . يزرع بالحنال ويقوم بسبح  
 ويكاسكون الذين يطرحون درعهم الذى  
 تباستى السدايد والاحزان والاوجاع .

وعن محل السعيره واذا بلغ المحل جمع  
 انصار المنح من الامه يطفى . فقال الملك  
 اصربوه على راسه وقال للطوبى هذا فرح  
 الذى محله قلت لى . فقال له القديس نعم هذا  
 هو فرحى ان لم يعرف الفلاح وبصر على  
 الشمس ما يقدر يتغزا بعلمه . قال الملك فيسقى  
 لك في هذا الرمان تعرف وتقب اذن وانه  
 امر ان يحضروا مع دخل ونظرون ويطح  
 للقديس على قفاه وبصر راسه في كحل  
 ويسد ويوحدا ناس فصب وبصوا الملح والحل  
 والنظرون مذا من الحل في انفه وبصعطوه  
 به . ومردك وامر الملك ان يحضروا  
 مزود وعلوه من رماد العن وبصروا  
 في ذلك راسه . وبوط راس المزود  
 في رقبته لئلا ينفس واذا تنفس  
 استسقى الرماد في انفه . وتركه في

(119բ) ՍԱ ՎԱՐՔՆ Է ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻՈՍԻ (ԱՂՐԻՂՈՒՐԻՈՒՍ),  
ՈՐՆ ՈՒՍՈՒՑԱՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (ԱՐՄԻՆԻԱ) ԵՎ ՆՐԱ  
ԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ: ՆՐԱ ԲԱՐԵՆՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՊԱՆԻ ՄԵՉ, ԱՄԵՆ

Եվ սա՛ Դիոկլետիանոս (Դիոկլիթիանուս) բռնակալ թագավորի ժամանակ էր, որը Հոռմ (Իրումիա) քաղաքի վրա էր [իշխում]: Իսկ Պարսից և Հայոց վրա [իշխում] էր մի թագավոր, որը կոչվում էր Տրդատ (Տիրդաթ): Տըրդատ թագավորին տեղեկացրին, որ իր երկրում կա մի մարդ, որ կոչվում է Դրիգորիոս, պաշտում է Քրիստոսին և ծաղրում աստվածներին: Թագավորը նրան փնտրել տվեց: Երբ նրան բերեցին, թագավորը տեսակ-տեսակ տանջանքներով սպառնաց և ահաբեկեց: Ասաց նրան. «Եթե չթողնես Քրիստոսի պաշտամունքը և ինձ հպատակվելով չպաշտես իմ աստվածներին, ապա ես քեզ չեմ ազատի տանջանքներից, կապանքներից ու բանտից (120ա) ...»:

Երբ այս վիճակում էր լուր [եկավ] Հոռմի թագավոր Դիոկլետիանոսից տեղեկացնելով, որ [թշնամին] մեր դեմ դուրս է եկել կովի և այդ պատճառով լուր էր ուղարկել Տրդատին, պատերազմում օգնության կանչելով նրան, քանզի Տրդատը քաջ պատերազմող էր: Այդ ժամանակ հրամայեց Գրիգորիոսին բանտարկել և դուրս եկավ պատերազմի, հաղթեց ու վերադարձավ:

Վերադարձավ Հայաստան երկիրը և իջավ Երիզա (Արզան) կոչված քաղաքը, ուր Արտեմիսի (ալ-Արթամաս)<sup>2</sup> տաճարը կար, որին պաշտում էին: Նա իր վրանները խփեց Գայլ (ալ-Զիբ) կոչված գետի վրա և նրան զոհեր էր մատուցում:

Երբ նստեց ընթրիքի, խմեց, ուրախ զգաց, զվարթացավ և հիշեց երանելի Գրիգորիոսին: Հրամայեց իր մոտ բերել նրան: Ասաց նրան թագավորը. «Ով Գրիգորիոս, վերցրու խունկ, ոստեր ու ճյուղեր, գնա տաճարը (120բ) Արտեմիսի (Արթամաս) և երկրպագիր նրան ու փառավորիր»: Սակայն երանելի Գրիգորիոսը ոչինչ չվերցրեց և չգնաց:

Թագավորը ասաց նրան. «Դու մի օտարական ես և այս երկրում ժառանգություն չունես. եկար մեզ մոտ և հարդեցինք ու հյուրասիրեցինք քեզ ու թե քիչ, այլ շատ: Ինչպես համարձակվեցիր պաշտել մի աստված, որին ես չեմ պաշտում»: Հրամայեց նրան այդ օրը բանտարկել:

Երբ մյուս օրը եղավ, հրամայեց բերել նրան: Ասաց. «Ինչքան ժամանակ է, որ քեզ ճանաչում եմ և գիտեմ, որ ամբողջ սրտով ինձ հետ աշխատում էիր: Ես շնորհակալ եմ քեզանից և գոհ եմ քո գործերից: Որոշել էի քեզ վարձատրել քո գործերի համեմատ, ուստի դու պետք է ինձ հնազանդվես»:

Պատասխանեց Գրիգորիոսը և ասաց. «Գրված է «Ծառայք հնազանդ լիցին մարմնաւոր տէրանց»<sup>3</sup>: Այժմ արա ինչ որ կամենում ես: Ինչպես ինքդ էլ վկայեցիր, իմ ամբողջ սրտով ծառայել եմ քեզ, իսկ հավատը (121ա). պատիվը և երկրպագությունը պետք չէ ուրիշին տալ...: Բացի կենդանի իրական Աստծուց, քանզի միայն նա է արարիչը երկնքի ու երկրի և հրեշտակ-

<sup>1</sup> Թվում է, թե սրանից առաջ ջնջված տողեր պետք է լինեն:

<sup>2</sup> Անահիտ:

<sup>3</sup> Եփես., 2, 5:

ները նրան են փառավորում, երկրի վրա ապրող մարդը նրան է պաշտում, երկրպագում և կամքը կատարում»:

Թագավորն ասաց. «Ինչո՞ւ ի շիք դարձրիր քո վաստակը, որին ես վկա եմ: Տեսնում եմ, որ ինձ ստիպելու ես քեզ ստորացնել, փոխանակ այն պատվի, որ ուզում էի տալ, տանջել քեզ, փոխանակ աստիճանդ բարձրացնելու, իսկ դրանից հետո քեզ մահվան կհանձնեմ և կյանքից կզրկեմ, եթե ինձ չըհնազանդվես ու իմ աստվածներին չպաշտես, մանավանդ աստվածների մայր մեծ Արտեմիսին (Արթամիս), որը օրհնությունն է մեր և բոլոր ազգերի, նրանով է ապրում ամբողջ աշխարհը և նրան հարգում են բոլոր թագավորները, ինչպես նաև Հռոմի թագավորը»:

Ասաց նրան, Գրիգորիոսը. «Ես ամբողջ սրտով ծառայել եմ քեզ և կարծում եմ, որ իմ վաստակը չի կորչի, ինչպես դրված է. «Ծառայք հնազանդ լերուք տերանց ձերոց (121բ) միամտութեամբ»<sup>4</sup> քանզի երկնայինից ենք ընդունելու... քեզանից չէ, որ ուզում եմ վարձատրություն ստանալ քեզ ծառայելուս համար, այլ երկնքի և երեկի ու աներևույթ արարածների արարչից: Իսկ գու սպառնում ես վարձատրության փոխարեն ավելացնել իմ տանջանքները, իմացիր, որ այսպիսով կավելացնես այն ուրախությունը, որ պատրաստել է ինձ համար Քրիստոսը, որը հավիտենական աստված է և նրա թագավորությունը անանցանելի: Փոխանակ պատվի, որն ինձ խոստացել ես, կամենում ես տանջել, սակայն ղրանով ինձ կմոտեցնես հրեշտակների ուրախությանը: Իսկ քո սպառնալիքը, թե ինձ կտաս բանտ և կապանքներ, ապա իմացիր, որ այդպիսով ինձ մոտեցնում ես երանության, քանզի հանձն եմ առնելու կապանքներ իմ տիրոջ նման և այդպիսով կուրախանամ և կհրճվեմ նրա գալստյան մեծ օրը: Դու կամենում ես ինձ մերժել քո սեղանից և չգիտես, որ այդպիսով, ինձ բազմական ես դարձնում հավատո հայր Աբրահամի (Իբրահիմ) և բոլոր սրբերի հետ ուրախության սեղանին Աստծո արքայության մեջ: Սպառնալով ինձ դառն մահվամբ, դու ինձ կուղարկես (122ա)... որը բնակարանն է մարգարեների, առաքյալների, մարտիրոսների ու աստվածասերների: Ասում ես, թե տեսանելի կյանքից կզրկես ինձ, բայց չէ որ այդպիսով ինձ կմոտեցնես ուղիղ հավատքին, որը Աստծո սիրեցյալներին ժառանգեցնում է հավիտենական կյանքը: Իսկ դու և ամեն ոք, որ պաշտում է կուռքերը, որոնք անշունչ են և մարդկանց ձեռքի գործը [զուրկ եք հույսից]: Ասում ես, թե մեծ Արտեմիսը աստվածների մայրն է, ապա իմացիր, որ այժմ հույսը բարձրանում է և ճշմարտության լույսը երևում է: Այդ ժամանակներում անհավատները պաշտում էին սատանային ու երկրպագում և իրենց պիղծ միջոցներով մոլորեցրին մարդկանց, որ մեհյաններ կառուցեն ձեռագործների, այսինքն կուռքերի համար ու երկրպագեն ղրանց, որոնք չեն կարող ոչ բարիք, ոչ էլ չարիք գործել, ոչ պատվում են իրենց երկրպագողներին և ոչ էլ պատժում իրենց թշնամանողներին, իսկ գուք ձեր անմտության պատճառով անգիտակցաբար պաշտում եք ղրանց: Թողի՛ եք Աստծուն, որը ձեզ բարիքներ է շնորհել և պաշտում եք քարեր (122բ), փայտ, արծաթ... մարդու ծառայության համար: Իսկ ես... երկուղածություն մը ու հնազանդությամբ պաշտում եմ ամենայնի արարիչ Աստծուն, որդուն՝ մեր տեր Հիսուս Քրիստոսին և կենդանի Սուրբ Հոգուն, որը հոր և որդու հետ ամենայնի կարգավորիչն է: Նա կարող

<sup>4</sup> Եփես., 2, 5:

է բոլորին սպանել կամ կենդանացնել, իսկ մեր կյանքը հավիտենական է, քանզի մեր փրկիչ Աստծուն ենք պաշտում: Եվ թեպետ մեռնենք, կենդանի կմնանք: Նա իր որդու մահվամբ ու հարության մեղ ցույց տվեց հարության ճանապարհը: Մենք, որ նրա համար ենք մեռնում, կենդանի կմնանք նրա գալըստյան ահեղ օրը: Նրանից կստանանք հին վարձատրությունը ամբարիշտների մեր նկատմամբ գործած արարքների փոխարեն»:

Թագավորն ասաց. «Ասում ես, թե դու ինձանից չես ուզում վարձատրությունը և ոչ էլ դրա կարիքն ունես: Ես գիտեմ, որ դու արհամարհում ես ինձ և դրա համար էլ կարիք չունես իմ ազնվությանը: Ահա ես քեզ կուղարկեմ այնտեղ, ուր կստանաս վարձատրություն նրանց հետ, ովքեր քեզանից սուտ մեռան (123ա): ...որ գիտենամ... ըստ քո գործերի, որի մասին դու ասում ես, թե երեւելի և աներևույթ ամեն ինչի արարիչն է: Արդյոք նա իշխանն է գերեզմանների, ուր ուզում ես գնալ կամ նա՞ է արձակիչը բանտարկյալների: Ո՞ր է այդ անպակաս ուրախությունը, որ ցանկանում ես, ո՞ր է քո քրիստոսը և նրա գալուստը: Ո՞ր են հրեշտակները, որոնց մասին պատմում ես և ի՞նչ է քո հույսը: Տեղեկացրու և բացատրիր ինձ այն խոսքը, թե ես հույսից զուրկ եմ: Չենք ների քեզ սուտ մեղադրանքներդ աստվածների և իմ մասին, քանզի դու անարգեցիր աստվածներին, որոնք անմահ են, անարգեցիր մեր թագավորությունը և մեզ [թագավորներին] ասացիր, թե խելք չունեք, քանի որ աստվածներին եք պաշտում: Բացատրիր մեզ խոսքերդ»:

Ասաց սուրբ Դրիգորիոսը. «Եթե կամենում ես լսել ուշադիր, ականջ դիր իմ խոսքերին: Տեր Հիսուս Քրիստոսը իսկապես որդին է Աստծո, ամենայնի արարիչը (123բ), վարձատրողը կենդանյաց և մեռելոց: Բարեգործներին բարիքով է հատուցում, իսկ չարագործներին՝ չարիքով, նա է թագավորը և գերեզմանների տերը: Նա է, որ մեռավ իր կամքով և հարության առավ, իր մահվամբ մահվան կապերը քանդեց, և հայտնի դարձրեց մեռյալների հարությունը: Նա պահպանն է սրբերի ոսկորների, քանզի նա ինքն է հարությունը և կյանքը: Նա հարուցիչն է և նորոգիչը մարդկային մարմինների, իսկ հրեշտակները նրանք են, որոնք մշտապես և անդադար փառավորում են նրան: Ահա այս է մեր հույսը, իսկ ձեր հույսը սուտ է, քանզի չեք ճանաչել ձեր արարիչին, այլ դարձել եք սատանայի ստրուկը: Դուք պաշտել եք ստեղծվածը արարչի փոխարեն, հիրավի ձիու և ջորու նման եք, քանզի նրանք իմաստություն չունեն և դեռ ավելի վատ եք, քան ավանակներն ու կովը՝ չունեք խելք կամ իմաստություն, քանզի չհասկացաք ձեր արարիչ աստծուն: Իրա համար նրա գալստյան ժամանակ ահավոր կլինի: Նա սանձով ու երասանակով կդակաները կճմլի բոլոր նրանց, որոնք նրան չեն ճանաչում: Իսկ այն խոսքը, թե (124ա) ես անարգեցի քո աստվածներին, ապա նրանք չգիտեն ոչ մի պատիվ կամ թշնամանք, քանզի նրանք ձեռքի գործ են, դրա համար էլ նրանց ստեղծողներն էլ նրանց նման են՝ անասունների պես, որոնք քիտակցություն չունեն, ինչպես ձեր աստվածները՝ «բերան ունին և ոչ խոսին, աչք ունին և ոչ տեսանեն, ականջս ունին և ոչ լսեն, ունչս ունին և ոչ հոտոտեն, ձեռս ունին և ոչ շոշափեն, ոտս ունին և ոչ գնան»<sup>5</sup>: Դրա համար է ասել մարգարեն. «Նման նոցա եղիցին, որք արարին զնոսա և ամենեքեան ոյք յուսացեալ են ի նոսա»<sup>6</sup>:

<sup>5</sup> Սաղմոս, ՃԺԳ, 5—8:

<sup>6</sup> Սաղմոս, ՃԼԴ, 16—18:

Երբ թագավորը լսեց նրա խոսքերը, ղայրացավ և ասաց նրան. «Քանի՜ քանի անգամ պատվիրել եմ քեզ, որ չհամարձակվես իմ առջև ասել, որ նրանք մարդկանց ձեռքի գործ են: Ես խնայեցի քեզ, կամենալով, որ այսպիսով վերադառնաս [ուղիղ ճանապարհին] և երկրպագես աստվածներին, որոնց սիրուն ես քեզ պատվեցի: Եվ ահա ասում ես, որ մի ուրիշ աստված է՝ ամենատես արարիչը և անարգում ես ամեն ինչի կարգավորիչ ճշմարիտ աստվածներին: Իսկ աստվածների մայր՝ մեծ (124բ) կենդանի Արտեմիսը, որ աշխարհին կենդանություն է տալիս և Դիոսը (Դիա)<sup>7</sup>, երկնքի ու երկրի արարիչը և աստվածների խումբը, ապա բոլորին անվանեցիր անշունչ և անմիտ: Մեզ էլ անարգեցիր, նմանեցնելով անասունների: Այժմ ես քեզ տանջանքներ կտամ, երասանակ կդնեմ քո կզակին, որ իմանաս, թե ասած խոսքերդ քեզ վրա են դառնալու: Քեզ համար պատիվ պիտի համարեիր, որ ինձ նմանը խոսում է քեզ հետ, իսկ դու համարձակվեցիր և ինձ հետ խոսեցիր ամեն խոսքիս պատասխան տալով, կարծես քեզ հավասար լինեի»:

Շատ ղայրացավ թագավորը և հրամայեց, որ ձեռքերը ետևը կապեն և բերանին սանձ դնեն: Ծոծրակին աղի բեռ դրեցին, կրծքին գոտիով կապեցին և պարաններով [կապած], վեր բարձրացրին մեքենաներով<sup>8</sup>, այս վիճակում կախված մնաց յոթ օր:

Դրանից հետո թագավորը հրամայեց, որ նրան աղատեն այդ տանջանքից: Այդ ժամանակ (125ա) նրա առջև բերել տվեց տանջանքի բազում միջոցներ: Եվ ասաց նրան. «Ինչպես կարողացար համբերել այս օրերի ընթացքում դառն տանջանքներին: Այժմ արգեն փորձով տեսար, որ ձիու և ջորու նման բեռ տարար և կանգնեցիր ու շարժվեցիր: Այս բոլորը աստվածներին հայհոյելու համար էր և այն խոսքիդ, թե նրանք գիտակցություն չունեն: Ահա սա է նրանց վարձատրությունը քեզ այդ բանի համար: Իսկ ես ասում եմ, որ եթե չընդունես ու չհավատաս աստվածներին և չդադարես նրանց կրկին թշնամանելուց, սրանից ավելի տանջանքներ կհասնեն քեզ»:

Սուրբ Գրիգորիոսն ասաց. «Աստվածները, որոնց մասին խոսում ես, մարդկանց ձեռքի գործ են, կուռքեր, որոնք ո՛չ ղգացում ունեն, ո՛չ էլ միտք, շինված են փայտից, քարից, պղնձից, արծաթից և ոսկուց: Երբեք չեն խոսել և չեն խոսի և ոչ էլ ղգում են քո [տված] պատիվը կամ անարգանքը. ոչ էլ նրանք քեզ ասել են, որ ինձ տանջես իրենց վրեժը լուծելու համար (125բ)... նրանք չունեն գիտակցություն... ո՛չ շունչ, ո՛չ միտք... ինձ... և իմ վրա աղ բեռցնելը, ապա ես ապավինում եմ Աստծուն՝ երկնքի ու երկրի արարչին, նրա միածին որդուն՝ Հիսուս Քրիստոսին և բարեխոս<sup>9</sup> Սուրբ Հոգուն: Նա կտա ինձ իր թեթև խոնարհ լուծը, որը նման է հավիտենական անլանց պարզևների: Նա խոնարհներին կբարձրացնի հատուցման օրը՝ աշխարհի վախճանին: Այդ ժամանակ նա, անվերջանալի ուրախությամբ, կհանգստացնի բոլոր հոգևածներին, ինչպես խոստացել է:

<sup>7</sup> Արամաղդ:

<sup>8</sup> Բնագրում՝ *بالمنجنيق*, այսինքն՝ բարանով:

<sup>9</sup> Բնագրում կա *بالقسط*. II բառը, որը հունարեն *πρόσταλητος* բառից է ծագում: Sophocles E. A., Greek lexicon of the roman and byzantine periods, II, 845.

Իսկ ովքեր կուռքեր են պաշտում, նրանց հավիտենական տանջանք կտա, ինչպես ասել է նրանց մասին մարգարեն. «Իջցեն որպէս զվէմս ի ջուրս բաղումս»<sup>10</sup>, Ասել է նաև փայտեղեն պաշտողների մասին. «Հուր վառեցաւ ի վերայ ամենայն փայտի ագարակի և այրեսցէ զմեղաւորս»<sup>11</sup>: Ասել է նաև արծաթեղեն պաշտողների մասին. «Արծաթ նոցա և ոսկի նոցա (126ա) [մի կարասցէ փրկել զնոսա յաւուր] բարկութեան Տեառն»<sup>12</sup>—որը կարող է... բոլոր ամբարիշտներին, այսինքն նրանց, ովքեր դիմադարձ են քեզ նման»:

Թագավորը ղայրույթով լցվեց ու հրամայեց, որ մեկ ոտքից գլխիվայր կախեն, նրա տակը աղբ վառելով ծուխ առաջացնեն ու զանահարեն գլավազաններով: Կատարեցին այն և նրան տասը տղամարդ հաջորդաբար ծեծեցին, ինչպես հրամայել էր թագավորը: Այսպես կախված մնաց յոթ օր:

Եվ մինչդեռ կախված էր, աղոթում էր ու ասում. «Գոհանամ քեզանից տեր, ես արժանի չէի և դու ինձ արժանացրիր այս սլարգևին, քանզի դու ի սկզբանէ սիրել ես քո ձեռքերի ստեղծածին, տվեցիր նրան դրախտը և առանց մահու անաշխատ վայելքը: Եթե միայն պահպանեինք քո պատվիրանը, որը տվել էիր, «Մի ուտիցէք յայդմ ծառոյ զոր պատուիրեցի շուտել ի դմանէ»<sup>13</sup>. Լենաց կոչված ծառը չէր կարող մեզ կյանք տալ (126բ) առանց քո խոսքի և ուժի... քո միածին որդին:

Եթե պահպանեինք այն պատվիրանը, որ դու տվել էիր մեզ, կշնորհեիր անաշխատ, անցավ, անտրտում և առանց ծերության կյանքը: Երբ մարդկային ցեղը բազմացավ, մեղ ցույց տվեցիր հարուստի ճանապարհը ինչպես Ենովքին (Ախնուխ), որին այստեղից բարձրացրիլ դեպի դրախտ: Եթե մենք էլ պահպանեինք պատվիրանը, մենք ևս դրախտին կարժանանայինք և անվերջանալի կյանք կունենայինք Նոյի (Նուհ)<sup>14</sup> նման և արժանի կլինեինք հանդերձյալ կյանքին<sup>15</sup>. «Զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ՝ պատրաստեցեր դու սիրելեաց քոց յառաջադոյն»<sup>16</sup>: Սակայն երբ թշնամին տեսավ քո մեծ ողորմածությունը, նախանձեց մեզ այդ շնորհի համար, որ մեզ տվեցիր, քանզի դու ասել ես. «Ի նմանութիւն պատկերի կերպարանաց իմոց արարի ես զմարդն և կացուցի զնա տէր ամենայնի»<sup>17</sup>: Ասկա եկավ մոլորեցուցիչ թշնամին, հրապուրեց մարդուն և ղրկեց կյանքից ու հանգստից, որ դու շնորհել էիր նրան (127ա)...

Սակայն քո բաղում ողորմածությամբ աշխարհ ուղարկեցիր սուրբ մարգարեններին, որոնք դարձան աշխարհի աստղերը. իսկ չար մարդիկ ատեցին ու հալածեցին նրանց, երբ [մարգարենները] հայտնեցին քո խորհուրդները, քարոզեցին քո կամքը, քո ցանկությունը և գալուստը քո միածին որդու տեր Հիսուս Քրիստոսի, որ եկավ աշխարհ և կրեց մարդկանց մեղքերը: Նրանք քարոզեցին և մեռան ամբարիշտ մարդկանց ձեռքով: [Դրա համար] եթե զորքերը իմ դեմ պատերազմի դուրս գան, իմ սիրտը չի վախենա և եթե ճակա-

10 Նեեմ., Թ, 11:

11 Երեմ., է, 20:

12 Եզեկ., է, 19: Սոփոն., Ա, 18:

13 Մենդ., Բ, 17, Գ, 11:

14 Գրչական սխալ է, պետք է լինի Ենովք (Ախնուխ):

15 Բնագրում՝ թագավորության:

16 Ա Կորնթ., Բ, 9:

17 Մենդ., Ա, 26:

տամարտի դուրս գան, չեմ երկյուղի, քանզի քեզ եմ ապավինում, որ մեր օրերում հայտնեցիր քո կամքը, իսկ առաջ հայտնել էիր մարգարենների բերնով քո միածին որդու մասին, որը հավիտենական է: Նա է բանն Աստծո, որը Մարիամ կույսից մարմնացավ վերջին ժամանակներում: Եվ ինչպես Եվայի (Հաուա) միջոցով մահը եկավ աշխարհ, այդպես էլ սուրբ կույսի միջոցով աշխարհ եկավ կյանքը (127բ): Եվ ինչպես առաջին Կայենի (Կային) միջոցով, որին ծնեց Եվան, աշխարհ եկան անեծք, քրտինք, տանջանք և ցնցումներ, այդպես էլ անարատ կույսից ծնած քո միածին որդու շնորհիվ աշխարհ եկավ հանգիստ կյանք և օրհնություն: [Նա է] լույս ի լուսո և կյանք ի կենաց, որ [աշխարհ] եկավ, մեր մարմինը հագավ, որպեսզի մեզ ընդգրկի իր աստվածություն մեջ: Ծնվեց ինչպես կամեցավ և մնաց իր փառքի մեջ, ինչպես որ էր: Նրա աստվածությունը, ինչպես որ կար, կլինի ու կմնա հավիտյանս հավիտենից Հոր և Սուրբ Հոգու հետ:

Քանզի նա այնքան սիրեց մարդկանց, որ դարձավ մարդ առանց մեղքերի, որպեսզի մեզ արժանի դարձնի աստվածային ուրախության: Մեզ ստեղծեց իր պատկերի նման, որպեսզի կուռքեր պատրաստողներին և պաշտողներին իրեն քաշի և իր աստվածությանը հնազանդեցնի: Քանզի մարդիկ անպիտանացան և նրան թողնելով սկսեցին անշունչ կուռքեր պաշտել: Իսկ նա մեր պատկերը ստացավ և այն բարձրացրեց խաչի վրա (128բ), որպեսզի [մարդկանց] իր պատկերին հնազանդեցնի: Իր խաչը կարթ դարձրեց, և իր մարմինը համայն աշխարհին խայծ, որպեսզի նրա միջոցով բոլորիս որսա իր արքունի սեղանին, իսկ նրա թագավորությունն անվախճան է:

Փոխանակ փորված փայտե կուռքերի, իր խաչը դրեց աշխարհի մեջտեղ, որպեսզի նրա միջոցով այս փորված փայտը պաշտողներին համոզի իր խաչին երկրպագելու: Այդ մասին է խոսել մարգարեն և ասել. «Եղէ ես որպէս գիտու՝ որ ոչ լսէ և իբրև զհամր՝ զի ոչ բանայ զբերան իւր»<sup>18</sup>: Ասել է նաև. «Կապեցից զլեզու քո ի քիմս քո և եզիջիր դու իբրև զայր մի, որոյ ոչ գուցեն բանք յանդիմանութեան ի բերան իւրում»<sup>19</sup>: Եվ քանզի մարդիկ սիրում էին անխոս կուռքերն ու սնոտի աստվածների պատկերները, այդ պատճառով էլ քո միածին որդին դարձավ մարդու նման, ելավ խաչի վրա և երևաց աշխարհին: Ուստի տեսնելով նրան, բոլոր ընտրյալ սրբերը ուրախացան, ցնծացին և հնազանդվեցին (128բ) երկրպագելով: Եվ քանի որ մարդիկ ուրախանում էին կուռքերի մեհյաններում և զոհեր էին մատուցում սնոտի, խայտառակ, անշունչ աստվածներին, այդ պատճառով դու աշխարհը հրավիրեցիր քո միածին որդու զոհաբերմանը, ասելով. «Զպարարակ իմ զենեալ է և զճաշ իմ պատրաստեալ է»<sup>20</sup> և մեծացավ ուրախությունը քո որդու խաչելությունամբ: Դու աշխարհը կշտացրիր նրա կենարար մարմնով, իսկ ովքեր որ չուղեցին զայ հոգևոր հարսանիքին, մեր աստված՝ միածին որդու Հիսուս Քրիստոսի հետ միասին, ապա նրանց համար հավիտենական տանջանք պատրաստեցիր և նրանց քաղաքները անշեջ հրով վառեցիր:

Եվ քանզի նրանք սովոր էին իրենց զոհաբերած [անասունների] արյունը խմել, այդ պատճառով էլ իր արյունը թափեց խաչի վրա և դրանով մեզ

<sup>18</sup> Սաղմոս, 115, 14:

<sup>19</sup> Եզեկ., 7, 26:

<sup>20</sup> Մատթ., 10, 4:

փրկեց մեր մեղքերի ստրկությունից և վերադարձրեց իր աստվածությունը: Մենք մեր անձերի տերերը չենք, որ ընթանանք ըստ մեր մարմնավոր ցանկությունների (129ա) և կամ ըստ մահկանացու մարդկանց ցանկության: Իսկ իշխող մարդկանց պետք է պատվենք, սակայն ոչ որպես աստվածների և ոչ քո աստվածային պատվի նման, ոչ էլ այն բանի համար, որ վախեցնում կամ սպառնում են, քանզի նրանք միայն մարմինն են տանջում: Իսկ քո միածին որդին Հիսուս Քրիստոսը կարող է հոգին և մարմինը միասին փշացնել դժոխքում:

Այլ Տեր խնդրում եմ քեզանից, որ ինձ տառ ուժ և համբերություն, տուկալու ամեն մի վշտի և ողորմիր ինձ, ինչպես ողորմեցիր ավազակին, որ խաչվեց քո որդու հետ: Քեզ ենք փառավորում, քանզի առատ է քո ողորմությունը, որի շնորհիվ ապրում ենք բոլորս՝ թե՛ արդարներ, թե՛ մեղավորներ շնորհիվ քո ողորմածությանը: «Զի ծագես զարեգակն քո ի վերայ չարաց և բարեաց և ածես զանձրև ի վերայ արդարոց և մեղաւորաց»<sup>21</sup>: Դու զսպում ես քո բարկությունը և ողորմություն ցուցաբերում բոլոր արարածներին առհասարակ: Շնորհ տուր ինձ, Տե՛ր, համբերելու այս դառն ցավին, Դրի մեջ ես գտնվում եմ, որ դառնամ (129բ) արժանի պահպանելու ավանդությունը անբիծ մկրտության քո որդու: Դա լուսավոր հավատքն է, որ նվիրել ես ինձ և ես կատարում եմ քո կամքը, որպեսզի չամաչեն քեզ հուսացողները և քո միածին որդով՝ Հիսուս Քրիստոսով հպարտացողները: Իսկ դու, ո՛վ Աստված և Տեր, որ ասացիր. «Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչ ի վախճան աշխարհի»<sup>22</sup>, մի լքիր ինձ, այլ զորացրու քո կամքը կատարելու և հնազանդվելու համար, որ համբերեմ այս պայքարի մեջ հանուն քո մեծ անվան, որ քո ծառան հպարտանա քո հանդեպ ունեցած հավատքով, իսկ թշնամիները տեսնեն քեզ հուսացողների ուժը:

Այո՛ Տեր, հաշվիր ինձ քո արդարների շարքը հանուն քո մարդասիրության: Դու մեղ չպատժեցիր մեր հայրերի ու պապերի մեղքերի համար, այլ օգնեցիր ճանաչելու քո աստվածությունը, որպեսզի չկորչենք կռապաշտության մեջ: Դու գթացիր քո արարածներին, որ մեր վրա չգա քո հավիտենական բարկությունը, մեր վրա չգրգռվի (130ա) քո սրտմտությունը և քո ցասումը մեզ չսպանի: Ո՛վ Տեր, տուր ինձ զորություն, որ մինչև մահ համբերեմ հանուն քո անվան և դարձյալ վեր կենամ քո որդու՝ մեր տեր Հիսուս Քրիստոսի երկրորդ գալստյան ժամանակ: Այո՛, Տեր իմ ամենակալ, որ օգնում ես բոլոր քեզ հուսացողներին և կատարում ես կամքը բոլոր քեզանից երկրորդածների, արժանի արա ինձ պահելու քո հանդեպ ունեցած հավատքս և թող քո երկյուղը իմ առջև լինի, որ ազատվեմ այն հավիտենական տանջանքներից, որ պատրաստել ես ամբարիշտների և քեզանից օտարացածների համար: Տուր ինձ համբերություն այս ցավերի մեջ, որոնք ինձ շրջապատել են, քանզի դու ես մեր ցավերի բժիշկը, մեր վերքերի բուժիչը, նեղյալներին հանգստացնողը, կապյալներին արձակողը, սգավորներին մխիթարողը, անհույսներին հույս տվողը, խռովյալներին հանգստացնողը, խեղդվողների նավահանգիստը: Լսիր ինձ, Տեր և պատասխանիր իմ աղոթքին: Ցույց տուր քո լույսը այս աղբի մեջ և լուսավորիր նրանց հոգիները (130բ), դարձրու

<sup>21</sup> Մատթ., Ե, 45:

<sup>22</sup> Մատթ., ԻԸ, 20:

ներանց ցերեկվա որդիներ և լուսո զավակներ, արժանացրու նրանց ճանաչելու քո աստվածությունը, որ օրհնեն քեզ՝ անմահ աստծուն, միաժին որդուն մեր տեր Հիսուս Քրիստոսին և քո Սուրբ Հոգուն: Ինձ արժանի դարձրու, Տե՛ր, պսակ ստանալու քո պիղծելիների հետ, որոնք հանուն քո անվան մեռան և որոնց մահը փառավորված է քո առջև: Արժանացրու ինձ վերանալ և ամպերի վրա հափշտակվել քո միաձնին դիմավորելիս. քանզի քոնն է փառքը ու քո սուրբ հոգուն հավիտյանս հավիտենից ամեն»:

Այսպես աղոթեց [Գրիգորիոսը] երբ կախված էր: Գավազաններով ջարդեցին նրա բոլոր ոսկորները: Իսկ սուրբը աղոթում էր և գրագիրները գրի էին առնում<sup>23</sup> նրա խոսքերը: Նա դեռ շատ աղոթեց, բայց նրանք ամեն ինչ շարձանագրեցին: Նրանք թողեցին նրան կախված և հեռացան ու հայտնեցին թագավորին ինչ որ սուրբը ասել էր իրենց ներկայությամբ: [Թագավորը] հրամայեց իջեցնել նրան ու կանգնեցնել (131ա) իր առջև: Երբ կանգնեց նրա առջև, ասաց նրան Տրդատ թագավորը. «Ինչպե՞ս է վիճակդ, կմնա՞ս քրիստոնյա, թե կլինես ինձ նման, ինչպիսին էիր մանկությունից: Սակայն դու մահն ևս ընտրել ո՞վ Գրիգորիոս»:

Նա պատասխանեց. «Ես կփութամ դուրս գալ այս մարմնից և լինել Քրիստոսի հետ ստանալու համար հավիտենական կյանքը. շտապիր ու հրամայիր ինձ սպանել»:

Խաղավորն ասաց. «Քո ուղածի նման չեմ անի և քեզ շտապ չեմ սպանի, որ փրկվես տանջանքներից և զնաս հանգստի: Այլ կշարշարեմ քեզ ամենախիստ կերպով, մինչև որ աստվածների վրեժը լուծեմ քեզանից, քանզի դու անարգեցիր նրանց և չերկրպագեցիր»: Եվ հրամայեց թագավորը, որ բերնն փայտ ու գամեն ոտքերին, պարաններով կապեն այն հաշվով, որ կրծքից մինչև ոտքերը հասնեն: Եվ արյունը հոսում էր նրա մատներից: Ասաց նրան թագավորը. «Ինչպե՞ս ես գտնում (131բ) ո՞վ Գրիգոր (Ղրիղոր)<sup>24</sup> այս տանջանքը»: Երանելին պատասխանեց և ասաց. «Աստծուց ինձ շնորհված է իմ խնդրած ուժը, քանզի նա է ամենայնի կարգավորիչը և նրա միջոցով կհաղթեմ քեզ և քո հորը՝ սատանային»:

Երբ թագավորը նրա խոսքերը լսեց, հրամայեց նրան արձակել փայտից և ոտքերին բևեռներ գամել: Այս բանը իրոք կատարվեց և հրամայեց նրան տանջողներին, որ ձեռքերից բռնեն ու քարշ տան: Արյունը հոսում էր ոտքերից և գետինը թրջում: Ասաց նրան Տրդատ թագավորը. «Ո՞ր է աներևույթ արարիչը, որի մասին խոսում էիր»:

<sup>23</sup> Բնագրում { ١٣١ } (պահում, պահպանում էին):

<sup>24</sup> Հետաքրքրական է, որ այս դեպքում գրված է Գրիգոր, փոխանակ Գրիգորիոսի

## НОВОНАЙДЕННЫЙ ПОЛНЫЙ ТЕКСТ АРАБСКОЙ ВЕРСИИ АГАФАНГЕЛА

А. Н. ТЕР-ГЕВОНДЯН

(Резюме)

В 1902 г. Н. Я. Марр обнаружил в рукописи Sin. ag. 460 монастыря Святой Екатерины на Синае арабский неполный текст версии Истории Армении Агафангела, отличающийся от неизвестной до этого редакции. Обнаруженные после второй мировой войны греческие и арабские редакции Агафангела доказали, что действительно существовала другая самостоятельная версия Истории Агафангела, получившая в арменоведении название Житие. Армянский оригинал этой версии еще не обнаружен.

Летом 1972 г. нам удалось найти в Бейруте в микрофильмах арабских рукописей Синая список (Sin. ag. 455, датируется XII в.), в котором находится уже полный текст того же арабского перевода данной версии Агафангела (Житие). В рукописи, обнаруженной Н. Я. Марром, не доставало первых листов (двадцать пять страниц по обнаруженной нами рукописи). Благодаря этому полному тексту стало известно, что первый раздел (Хосров и Трдат) Истории Агафангела, отсутствующий в редакции Агафангела, названной греческое Житие (изданном Ж. Гаритом, т. е. в 1946 г.), в арабском Житии также почти отсутствует и дано только краткое изложение.

На основании имеющихся материалов можно полагать, что первая половина арабского Жития в некоторых местах переведена с той редакции Агафангела, которая носит название Житие Охриды (изданного Ж. Гаритом в 1965 г.), а другая половина также во многих местах переведена с греческого Жития. Точно не известно, с какого текста переведены остальные отрывки, в том числе и новооткрытые страницы, хотя они имеют большое сходство с армянским оригиналом Агафангела.

После обнаружения новой редакции Агафангела можно подробнее изучать вопрос о происхождении той версии, которая носит название Житие. В этом нам помогает Мовсес Хоренаци, который пользовался недошедшим до нас армянским оригиналом Жития. Во всех случаях, когда Хоренаци пользуется Агафангелом, он отмечает, что это взято у Агафангела. Однако не все сведения Хоренаци, приписываемые Агафангелу, находятся в дошедшем до нас армянском тексте Агафангела. Подобные случаи в прошлом вызывали недоумение у филологов-арменоведов, которым казалось, что эти сведения Хоренаци необоснованны.

Открытие новых редакций Агафангела доказало достоверность сведений Мовсеса Хоренаци. Например, говоря о событиях в Риме, Хоренаци упоминает папу Сильвестра (приписывая Агафангелу), о котором нет и речи у Агафангела. Однако греческое и арабское Жития упоминают Сильвестра. Хоренаци упоминает еще апостола Фаддея, как основателя армянской церкви, приписывая это сведение также Агафангелу. В армянском тексте Агафангела нет имени Фаддея, но в новооткрытой редакции Агафангела, названной Житие Каршунни (изданной М. ван Эсбруком в 1971 г.), именно в начале говорится о Фаддее и его деятельности при царе Армении Санатруке (I в.). Конечно, у Хоренаци есть и другие сведения, приписываемые Агафангелу и отсутствующие в армянском тексте Агафангела. Подобные сведения можно найти еще у историков V в. Фавста Бузанда, Лазаря Парпеци.

Существующие факты доказывают, что армянский оригинал Жития содержал больше фактов, чем дошедший до нас армянский текст Агафангела, и датируется первой половиной V в. Эти две версии являются произведениями двух разных течений в армянской церковной жизни. Дошедшая до нас версия (датируется серединой V в.) была официально принята церковью, вследствие чего армянский оригинал Жития со временем был забыт.